Հավելված
Սահմանված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2011 թվականի դեկտեմբերի 28-ի N616Ա որոշմամբ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐ «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1. «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Լիցենզավորված անձ) գնումների կարգի նկատմամբ լրացուցիչ պահանջները (այսուհետև՝ Լրացուցիչ պահանջներ) ենթակա են պարտադիր կիրառման բոլոր այն դեպքերում, երբ գնումների արդյունքում կատարված ծախսերը (ներդրումները) ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող են առնչվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) կողմից կարգավորվող ծառայություններին: Այդպիսի բոլոր գնումները Լիցենզավորված անձը պարտավոր է կազմակերպել և իրականացնել համաձայն իր կողմից հաստատված գնումների կարգի՝ ինքնուրույն՝ առանց կողմնակի կազմակերպությունների ներգրավման: Լիցենզավոր-ված անձի գնումների կարգը պետք է համապարփակ նկարագրի գնումների գործ-ընթացի իրականացման համար անհրաժեշտ բոլոր ընթացակարգերը: Լիցենզավորված անձը պարտավոր է իր կողմից հաստատված գնումների կարգը ներկայացնել Հանձ-նաժողով և հետագայում տեղեկացնել դրանում կատարված փոփոխությունների ու լրացումների մասին:

   Լիցենզավորված անձի կողմից սույն պահանջների խախտմամբ կատարված գնումները կարող են համարվել անարդյունավետ և սակագների հաշվարկման ընթացքում փոխհատուցվել մասնակիորեն:
2. Լիցենզավորված անձը գնումների իրականացման ընթացքում պետք է ապահովի, պաշտպանի, խրախուսի ազատ և բարեխիղճ մրցակցությունը:
3. Լիցենզավորված անձը գնումներ կատարելիս պարտավոր է միջոցներ ձեռնարկել գնումների գործընթացում ներգրավելու հնարավորինս մեծ թվով մասնակիցների՝ բացառելով որակավորման այնպիսի չափանիշների ու բնութագրերի, գնումների այնպիսի տեսականու, քանակների ու պատվերի կատարման այնպիսի ժամկետների սահմանումը, որոնք կրում են խտրական բնույթ, ստեղծում են հակամրցակցային

միջավայր կամ սահմանափակում են մրցակցությունը՝ հանիրավի խոչընդոտելով կամ սահմանափակելով որևէ անձի գնումներին մասնակցելու իրավունքը:

Այդ նպատակով՝

1) գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը.

գնման առարկայի բնութագրերը՝

ա) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

բ) պետք է բացառեն գնումների գործընթացում մրցակցության համար հանիրավի խոչընդոտների առաջացումը.

գ) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

դ) պետք է ներառեն գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանա-կացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկա-րագրությունը.

2) ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները պետք է հնարավորինս ներառեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինա-բանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրա-պետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտ-ների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայ-մանների վրա: Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողական և (կամ) գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնա-կիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան.

3) գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին, կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

4. Գնումների կատարման նախընտրելի և հիմնական ընթացակարգ պետք է հանդիսանա մրցույթը: Լիցենզավորված անձի կողմից անցկացվող բոլոր մրցույթները բաց են: Գնումները կարող են կատարվել նաև մրցակցություն ապահովող գնման այլ պարզեցված ընթացակարգերով: Այդպիսի ընթացակարգերը պետք է հստակ նկարագրվեն Լիցենզավորված անձի գնումների կարգում: Մրցույթի և մրցակցություն ապահովող գնման այլ պարզեցված ընթացակարգերի գնումների շեմերը համաձայնեց-վում են Հանձնաժողովի հետ: Լիցենզավորված անձն առանց մրցակցային ընթացա-կարգերի կիրառման կարող է իրականացնել՝

1) հրատապ գնումներ, եթե դրանք անհրաժեշտ են այնպիսի իրավիճակների վերացման համար, որոնք ծագել են Լիցենզավորված անձի կամքից անկախ և նախապես կանխատեսելի չէին.
2) մեկ անձից գնումներ, եթե դրանց գումարը չի գերազանցում 25 (քսանհինգ) միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը (ներառյալ բոլոր հարկերը, տուրքերը և այլ վճարները, որոնք առնչվում են տվյալ գնմանը): Լիցենզավորված անձը մրցակցային ընթացակարգեր կիրառելուց խուսափելու նպատակով չպետք է պարբերաբար իրականացվող գնումները բաժանի առանձին խմբաքանակների, փոխի գնման պայմանագրերով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայութ-յունների բնութագրերը.
3) տարածքի վարձակալության կամ օգտագործման, ցանցերի փոխկապակցման և տրաֆիկի փոխանակման, տեղական կամ միջազգային կապուղիների վարձակա-լության, միջազգային զանգերի վերջնավորման ծառայությունների, ինչպես նաև էլեկտրական էներգիայի, բնական գազի, խմելու ջրի մատակարարման և կեղ-տաջրերի մաքրման ծառայությունների գնման դեպքերում:

5. Լիցենզավորված անձը գնումների գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով պարտավոր է ձևավորել համապատասխան մարմիններ

(ստորաբաժանումներ, գնումների և մրցութային հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր և այլն) և ներգրավել այնպիսի մասնագիտացված անձնակազմ, որն ունակ է կազմակերպել և ընդունել ողջամիտ որոշումներ՝ տվյալ գնման գործընթացն իր նպատակին համահունչ իրականացնելու համար: Նշված մարմինների աշխատանքների համակարգումը պետք է իրականացնի Լիցենզավորված անձի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:

Սույն կետը չի սահմանափակում գնումների գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով անկախ փորձագետների ներգավելու՝ Լիցենզավորված անձի իրավունքը՝ պայմանով, որ այդ անձինք լիազորված չեն լինի կայացնել գնումների գործընթացին առնչվող որոշումներ:

6. Լիցենզավորված անձը պարտավոր է բացառել գնման գործընթացի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ներգարվված իր ներկայացուցչի և գնման գործընթացին մասնակցող անձանց միջև շահերի բախումը: Շահերի բախում է համարվում ցանկացած հարաբերություն, որը կարող է նպաստել Լիցենզավորված անձի ներկայացուցչի կողմից գնումների գործընթացին մասնակցող անձի օգտին գործողություններ կատարելուն կամ որոշումներ կայացնելուն: Շահերի բախման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է իր ներկայացուցչին զրկել տվյալ գնումների գործընթացին առնչվող որոշումներ կայացնելու իրավասությունից: Լիցենզավորված անձն այդ նպատակով պարտավոր է նաև գնման գործընթացում ներգրավված իր ներկայացուցիչների համար սահմանել վարվեցողության այնպիսի կանոններ, համաձայն որոնց նշված անձինք շահերի բախման պարագայում պարտավոր են անմիջապես տեղեկացնել Լիցենզավորված անձին:
7. Լիցենզավորված անձը գնումներ կատարելիս պարտավոր է անկողմնակալ վերաբերմունք հանդես բերել գնումների գործընթացին մասնակցելու ցանկություն հայտնած բոլոր անձանց նկատմամբ:
8. Լիցենզավորված անձը գնումների գործընթացին մասնակցող անձանց ներկայացրած տվյալները պետք է համարի հավաստի, քանի դեռ հակառակը չի ապացուցել:
9. Այլ հավասար պայմաններում Լիցենզավորված անձը պարտավոր է գերակայություն տալ տեղական արտադրողներին, մատակարարներին, աշխատանքներ կատարողներին և ծառայություններ մատուցողներին:

10. Լիցենզավորված անձը պարտավոր է գնումների գործընթացին մասնակցող ցանկացած անձի տեղեկացնել, որ սույն Լրացուցիչ պահանջների հետ կապված իր գործողություն-ները կամ անգործությունը կարող են բողոքարկվել Հանձնաժողովում:
11. Լիցենզավորված անձը պարտավոր է փաստաթղթավորել գնումների գործընթացի հետ կապված իր բոլոր որոշումները և գործողությունները՝ առնվազն 3 տարի պահպանման ժամկետով:
12. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարված գնումների մասին սահմանված ձևերին համապատասխան հաշվետվություն ներկայացնել Հանձնաժողով:
13. Լիցենզավորված անձը պարտավոր է իր կողմից հաստատված գնումների կարգը, գնման գործընթացների կազմակերպման մասին հայտարարությունները, հրավերները, գնումների բազային միավորը (1 մլն դրամ) գերազանցող՝ կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները տեղադրել իր պաշտոնական կայքում և հրապարակել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազորված մարմնի կողմից հրապարակվող տեղեկագրում (Գնումների էլեկտրոնային տեղե-կատու):